ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 26-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանի 1-ին կետով հաստատված կանոնադրության 19-րդ կետի 7-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հոկտեմբերի 1-ին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

«12» 09 2023թ.

ք. Երևան

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ - ներքին գործերի նախարարի տեղակալի սեպտեմբերի 12-ի թիվ 26-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) ինֆորմացիոն կենտրոնը (այսուհետ՝ Ինֆորմացիոն կենտրոն) Ոստիկանության կենտրոնական ապարատի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության շրջանակներում իրականացնում է պետական հաշվառումներ, այդ թվում՝ օպերատիվ, հետախուզական, վիճակագրական և այլ տեղեկատվական շտեմարանների ձևավորում, վարում, ոստիկանության ստորաբաժանումների տեղեկատվական սպասարկում և պետական այլ մարմիններին օրենքով սահմանված կարգով տեղեկատվության տրամադրում, Ոստիկանության արխիվային գործի կազմակերպում և վարում:

2. Ինֆորմացիոն կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարության, Ոստիկանության և սույն կանոնադրություններով:

3. Ինֆորմացիոն կենտրոնի կանոնադրությունը հաստատում է Ոստիկանության պետը:

4. Ինֆորմացիոն կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է Նախարարության և Ոստիկանության մյուս կառուցվածքային ստորաբաժանումների,

պետական մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցելով: Համագործակցության արդյունքում ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Ինֆորմացիոն կենտրոնի պետը:

5. Ինֆորմացիոն կենտրոնն իր իրավասության շրջանակներում Նախարարության և Ոստիկանության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից, օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ պետական մարմիններից և կազմակերպություններից պահանջում և ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն:

6. Ինֆորմացիոն կենտրոնի կառուցվածքում ընդգրկվում են Ինֆորմացիոն կենտրոնի պետը, Ինֆորմացիոն կենտրոնի պետի տեղակալը և Ինֆորմացիոն կենտրոնի բաժինները:

7. Ինֆորմացիոն կենտրոնը կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք և անհատականացման միջոցներ:

2. ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Ինֆորմացիոն կենտրոնի նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների միասնական հաշվառման իրականացումը, քրեական պետական վիճակագրական և այլ տեղեկատվական շտեմարանների ձևավորումը,

2) Ոստիկանության ստորաբաժանումներին, Հայաստանի Հանրապետության պետական այլ մարմիններին, ինչպես նաև օտարերկրյա պետությունների իրավապահ մարմիններին սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը:

9. Ինֆորմացիոն կենտրոնի խնդիրներն են՝

1) վարչական իրավախախտում կատարած, հանցագործության մեջ մեղադրվող, դատապարտված, հետախուզվող անձանց, քաղաքացիներին և կազմակերպություններին պատկանող հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների ու փաստաթղթերի հաշվառումը և դրանց վերաբերյալ օրենքով սահմանված կարգով տեղեկությունների տրամադրումը.

2) պետական հաշվառումների իրականացումը, օպերատիվ, հետախուզական, վիճակագրական և այլ տեղեկատվական շտեմարանների ձևավորումը, վարումն ու

օգտագործումը, ոստիկանության ստորաբաժանումների տեղեկատվական սպասարկումը և պետական այլ մարմիններին օրենքով սահմանված դեպքերում տեղեկատվության տրամադրումը.

3) Ոստիկանության արխիվային գործի կազմակերպումը և վարումը:

3. ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

10. Ինֆորմացիոն կենտրոնի աշխատանքների համակարգումը սահմանում է Ոստիկանության պետը:

11. Ինֆորմացիոն կենտրոնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Ինֆորմացիոն կենտրոնի պետը:

12. Ինֆորմացիոն կենտրոնի պետը պատասխանատու է Ինֆորմացիոն կենտրոնի առջև դրված խնդիրների և Ինֆորմացիոն կենտրոնին վերապահված գործառույթների իրականացման համար:

13. Ինֆորմացիոն կենտրոնի պետը հաշվետու է Ոստիկանության պետին:

14. Ինֆորմացիոն կենտրոնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Ոստիկանության պետը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում՝ Ոստիկանության պետի տեղակալը:

15. Ինֆորմացիոն կենտրոնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը Ինֆորմացիոն կենտրոնի պետը կարող է ստորագրել անմիջական ղեկավարի հանձնարարությամբ:

4. ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

16. Ինֆորմացիոն կենտրոնն ունի հետևյալ բաժինները՝

1) օպերատիվ տեղեկատվության և արխիվի բաժին.

2) քրեական վիճակագրության բաժին.

3) ինֆորմացիոն համակարգերի շահագործման բաժին:

17. Ինֆորմացիոն կենտրոնի բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

18. Օպերատիվ տեղեկատվության և արխիվի բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կենտրոնացված հետևյալ հաշվառումների վարումը՝

ա) օպերատիվ հաշվառման գործերի և դրանցով անցնող անձանց.

բ) ոստիկանության մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց.

գ) քրեական պատասխանատվությունից և պատիժը կրելուց խուսափող հետախուզվող անձանց.

դ) որպես պարտապան հետախուզվող անձանց.

ե) անհայտ կորած անձանց.

զ) չճանաչված դիակների և իրենց ինքնության վերաբերյալ տեղեկություններ տրամադրելուն ոչ ունակ անձանց.

է) հանցագործության մեջ մեղադրվող, դատապարտված անձանց.

ը) ոստիկանության նախկին աշխատակիցների անձնական արխիվային գործերի.

թ) օպերատիվ և հատուկ հաշվառման արխիվային գործերի.

2) սույն կանոնադրության 18-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվառումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի գրանցումը, մշակումը և տեղեկատվական համակարգ մուտքագրումը, դրանց օրինականության, իսկության, ամբողջականության և ներկայացման ժամկետների նկատմամբ հսկողության իրականացումը.

3) սույն կանոնադրության 18-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվառումների տվյալների շտեմարանների կառավարման (ադմինիստրացիա) իրականացումը.

4) տեղեկատվական բնույթի փաստաթղթերի նախապատրաստումը, կազմումը և Նախարարության ու Ոստիկանության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներին, իրավասու պետական մարմիններին սահմանված ձևի հաշվետվությունների տրամադրումը.

5) պետական մարմիններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց առանձին հարցումներով տեղեկատվության տրամադրումը.

6) Նախարարության և Ոստիկանության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներին արխիվային գործերի և փաստաթղթերի տրամադրումը.

7) իր իրավասության շրջանակներում Ինֆորմացիոն կենտրոնի և Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ու կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների միջև տեղեկատվության փոխանակման իրականացնումը.

8) սույն կանոնադրության 20-րդ կետի 1-ին ենթակետի «գ», «դ», «ե», «զ» պարբերություններով սահմանված հաշվառումներից ԱՊՀ մասնակից պետությունների իրավապահ մարմինների միջպետական ինֆորմացիոն բանկ հաշվառման ներկայացվող տեղեկատվության նախապատրաստումը և սահմանված ձևաչափով ներկայացումը.

9) ԱՊՀ մասնակից պետությունների իրավապահ մարմինների կողմից հետախուզում հայտարարված անձանց վերաբերյալ ոստիկանության ստորաբաժանումներին տեղեկատվության տրամադրման ապահովումը.

10) իր իրավասության շրջանակներում պահպանման ժամկետները լրացած, պատմական և գիտական արժեք չներկայացնող արխիվային փաստաթղթերի ոչնչացման կազմակերպումը և իրականացումը.

11) իր իրավասության շրջանակներում անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության տրամադրումը.

12) այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների իրականացումը:

19. Քրեական վիճակագրության բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված հանցագործությունների և դրանք կատարած անձանց կենտրոնացված հաշվառման վարումը.

2) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվառման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի գրանցումը, մշակումը և տեղեկատվական համակարգ մուտքագրումը, դրանց օրինականության, իսկության, ամբողջականության և ներկայացման ժամկետների նկատմամբ հսկողության իրականացումը.

3) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվառման տվյալների շտեմարանների կառավարման (ադմինիստրացիա) իրականացումը.

4) տեղեկատվական բնույթի փաստաթղթերի նախապատրաստումը, կազմումը և Նախարարության ու Ոստիկանության մյուս կառուցվածքային, տարածքային ստորաբաժանումներին, ինչպես նաև իրավասու պետական մարմիններին սահմանված ձևի հաշվետվությունների տրամադրումը.

5) պետական մարմիններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց առանձին հարցումներով տեղեկատվություն է տրամադրումը.

6) իր իրավասության շրջանակներում Ինֆորմացիոն կենտրոնի և Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ու կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների միջև տեղեկատվության փոխանակման իրականացումը.

7) իր իրավասության շրջանակներում պահպանման ժամկետները լրացած, պատմական և գիտական արժեք չներկայացնող արխիվային փաստաթղթերի ոչնչացման կազմակերպումը և իրականացումը.

8) իր իրավասության շրջանակներում անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության տրամադրումը.

9) այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների իրականացումը:

20. Ինֆորմացիոն համակարգերի շահագործման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կենտրոնացված հետևյալ հաշվառումների վարումը՝

ա) Ոստիկանության կողմից քննության ենթակա վարչական իրավախախտում կատարած անձանց.

բ) հափշտակված, կորած, վերահսկողությունից դուրս մնացած և (կամ) հայտնաբերված զենքի ու ռազմամթերքի.

գ) հափշտակված հնաոճ առարկաների և մշակութային արժեքների.

դ) հետախուզվող տրանսպորտային միջոցների.

ե) կատարված հանցագործությունների հետ կապված համարակալված իրերի, փաստաթղթերի և արժեթղթերի.

2) սույն կանոնադրության 20-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվառումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի գրանցումը, մշակումը և տեղեկատվական համակարգ մուտքագրումը, դրանց օրինականության, իսկության, ամբողջականության և ներկայացման ժամկետների նկատմամբ հսկողության իրականացումը.

3) սույն կանոնադրության 20-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվառումների տվյալների շտեմարանների (ադմինիստրացիա) կառավարման իրականացումը.

4) տեղեկատվական բնույթի փաստաթղթերի նախապատրաստումը, կազմումը և Նախարարության ու Ոստիկանության մյուս կառուցվածքային, տարածքային ստորաբաժանումներին, ինչպես նաև իրավասու պետական մարմիններին սահմանված ձևի հաշվետվությունների տրամադրումը.

5) պետական մարմիններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց առանձին հարցումներով տեղեկատվության տրամադրումը.

6) իր իրավասության շրջանակներում Ինֆորմացիոն կենտրոնի և Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ու կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների համապատասխան ենթակառուցվածքների միջև տեղեկատվության փոխանակման իրականացումը.

7) սույն կանոնադրության 20-րդ կետի 1-ին ենթակետի «բ», «գ», «դ», «ե» պարբերություններով սահմանված հաշվառումներից ԱՊՀ մասնակից պետությունների իրավապահ մարմինների միջպետական ինֆորմացիոն բանկ հաշվառման ներկայացվող տեղեկատվության նախապատրաստումը և սահմանված ձևաչափով ներկայացումը.

8) ԱՊՀ մասնակից պետությունների իրավապահ մարմինների միջպետական ինֆորմացիոն բանկում հաշվառված հետախուզվող տրանսպորտային միջոցների, հափշտակված, կորած և հայտնաբերված զենքի ու ռազմամթերքի վերաբերյալ Նախարարության և Ոստիկանության մյուս կառուցվածքային, տարածքային ստորաբաժանումներին, ինչպես նաև իրավասու պետական մարմիններին տեղեկատվության տրամադրումը.

9) իր իրավասության շրջանակներում պահպանման ժամկետները լրացած, պատմական և գիտական արժեք չներկայացնող արխիվային փաստաթղթերի ոչնչացման կազմակերպումը և իրականացումը.

10) իր իրավասության շրջանակներում անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվության տրամադրումը.

11) այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների իրականացումը: